ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Բաց Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am
Հաշվետվություն թիվ 08, 15.05.2019թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ Բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով հրավիրելու մասին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհրդի 2019 թվականի մայիսի 14-ի թիվ 08/01Լ որոշում (ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհրդի որոշումը և հավելվածը կցվում են):

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 էլ.փոստ՝ araratbank@araratbank.am

ք. Երևան

Կոդ: ՈՐԽ0102– N 08/01L
Դաս: ՀՊ
«14» մայիսի 2019թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով "Բաժնետիրական ընկերությունների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 84-ի 1-ին մասի բ)-ից ե), ժգ) կետերը, "Բանկերի և բանկային գործունեության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21^{6}-ի 1-ին մասի բ), ը), թ) կետերը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 12.1. կետի բ), ը), թ), ժէ) ենթակետերը՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2019 թվականի տարեկան ընդհանուր ժողովը հրավիրել 2019 թվականի հունիսի 11-ին ժամը 12^{00}-ին՝ ք.Երևան, Պարոնյան 21/1 հասցեում գտնվող ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Զարգացում մասնաճյուղում:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2019 թվականի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օր սահմանել 2019 թվականի մայիսի 15-ը:
3. Նախնական հաստատել և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 2018 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ համաձայն Հավելված 1-ի:
4. Բանկի տարեկան ընդհանուր ժողովին ներկայացնել շահույթի բաշխման առաջարկություն՝ համաձայն Հավելված 2-ի:
5. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2019 թվականի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգը՝ համաձայն Հավելված 3-ի:

6. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2019 թվականի տարեկան ընդհանուր ժողով հրավիրելու մասին բաժնետերերին ծանուցել պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով:
7. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցանկը՝ համաձայն Հավելված 4-ի:
8. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տեղեկացնել, որ սույն որոշման 7-րդ կետով հաստատված ցանկում ընդգրկված նյութերին կարող են ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչական շենքում (ք.Երևան, Պուշկինի 19), ինչպես նաև համացանցի Բանկի տնային էջում (www.araratbank.am):
9. Հաստատել օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկի ձևը՝ համաձայն Հավելված 5-ի:
10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝ **Ա. Սուվարյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ОТКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО АРАРАТБАНК
ARARATBANK OPEN JOINT-STOCK COMPANY
ՀԱՅԱՍՏԱՆ, ԵՐԵՎԱՆ
02500518
ARARATBANK
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Հավելված 3
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի
2019 թվականի մայիսի 14-ի N 08/01Լ որոշման

ՕՐԱԿԱՐԳ

2019 թվականի հունիսի 11-ին կայանալիք ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության հաշվիչ հանձնաժողովի անդամների ընտրության մասին:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության 2018 թվականի գործունեության արդյունքները հաստատելու մասին:
3. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության 2018 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները հաստատելու մասին:
4. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 31.12.2018թ. դրությամբ ֆինանսական հաշվետվություններում արտացոլված զուտ շահույթի բաշխման մասին:
5. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին:
6. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության Խորհրդի անդամ Վահրամ Ղազարյանի դիմումի համաձայն լիազորությունները դադարեցնելու և Վարդան Արամյանին, Միեր Անանյանին ու Արմեն Հարությունյանին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության խորհրդի անդամի պաշտոնում ընտրելու մասին: